Հաստատված է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2018թ. մարտի 14-ի թիվ 2 նիստում գիտական խորհրդի նախագահ

Ռոբերտ Միրզախանյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԶՈՒԳԱՀԵՌ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Սույն կանոնակարգը մշակվել է "Կրթության մասին", "Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին" ՀՀ օրենքների, ՀՀ Կրթության և Գիտության նախարարի կողմից հաստատված "ՀՀ պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգի", Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի /այսուհետ՝ Համալսարան/ կանոնադրության և այլ իրավական ակտեր հիման վրա:
2. Սույն ընթացակարգով սահմանվում է Համալսարանում զուգահեռ բարձրագույն մասնագիտական կրթություն /այսուհետ՝ զուգահեռ կրթություն/ ստանալու ընդհանուր պայմանները:
3. Համալսարանում զուգահեռ կրթություն կարող են ստանալ Համալսարանի առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ու մագիստրատուրայի ծրագրերով, տարբեր մասնագիտություններով սովորող, ինչպես նաև այլ հավատարմագրված բուհերի ուսանողները .
   ա/ առկա ուսուցման համակարգի սովորողները՝ Համալսարանի հեռակա ուսուցման համակարգում,
   բ/ հեռակա ուսուցման համակարգի սովորողները՝ Համալսարանի առկա ուսուցման համակարգում:
4. Բակալավրի կրթական ծրագրով սովորող առաջին կուրսի ուսանողներին զուգահեռ կրթություն ստանալ չի թույլատրվում:
5. Զուգահեռ կրթությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով:
6. Զուգահեռ կրթությունը կազմակերպվում է կրեդիտային համակարգով:

Զուգահեռ կրթություն ստանալու հավակնորդի տարբեր պատճառներով գոյացած առարկայական տարբերությունները և առարկաների առանձին բաժինները /ուսումնական պլանների, առարկայի ժամաքանակի կամ կրեդիտների տարբերություններ, չհանձնած քննություններ և ստուգարքներ/ համարվում են ակադեմիական պարտքեր:

8. Առաջացած առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի մարման համար սահմանվում է ժամկետ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների ավարտը:

9. Զուգահեռ կրթություն ստանալու դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում: Դիմումին կցվում է.

ա/ ակադեմիական տեղեկանք կամ ստուգման գրքույկի պատճենը,

բ/ 4 լուսանկար 3X4 չափսի,

գ/ անձնագրի լուսապատճենը:

10. Ուսանողների դիմումները քննարկելու համար ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով:

11. Համալսարանի ատեստավորման հանձնաժողովը քննարկում է ուսանողի դիմումը և որոշում նրա ուսումնառության կուրսը և մյուս պայմանները, կամ հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը:

12. Ատեստավորման հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա ռեկտորի կողմից տրվում է ուսանողի կցագրման հրաման:

13. Առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի հանձնումից հետո կցագրման հրամանը փոխարինվում է ուսանողի հրամանագրումով:

14. Համալսարանում ուսանողին տրվում է համապատասխան ստուգարքային գրքույկ:

15. Զուգահեռ ուսուցմամբ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար դիմած անձն համապատասխան կրեդիտների առկայության դեպքում ազատվում է իր նախորդ կրթան ծրագրի շրջանակներում ուսումնասիրած և տվյալ կրթական ծրագրում առկա առարկաներից:

16. Զուգահեռ ուսուցմամբ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է, համաձայն ՀՊՄՀ-ում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի:

17. Զուգահեռ ուսուցմամբ առաջին կրթական ծրագրի շրջանակներում ուսումնասիրած և երկրորդ կրթական ծրագրում առկա նույն առարկաներից կուտակած կրեդիտները և դրանց գնահատականները ենթակա են փոխանցման՝ գրանցելով դրանք դիպլոմի հավելվածում:

18. Սահմանված կարգով ամփոփիչ ատեստավորումը անցած ուսանողներին շնորհվում է համապատասխան որակավորում և դիպլոմ: